

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանի ուղերձը Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվա առթիվ

31.05.2017



Մի րեկի երեխաներ, հարգելի ծնողներ, տատիկներ և պապիկներ:

Ջերմորեն շնորհավորում եմ մոլորակի ամենալուսավոր տոներից մեկի՝ Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ:

Տոնն այս կրկին վերարթնացնում է յուրաքանչյուր երեխայի երջանիկ լինելու իրավունքի և ընտանիքի, հասարակության ու պետության կողմից այդ իրավունքի իրացման համար երջանիկ միջավայրի ապահովման խնդիրը: Մանկական երջանկության միակ և ամենակարևոր պայմանը ծնողական սերն ու ջերմությունն է, ուշադրությունն ու հոգատարությունը: Իսկ ընտանիքների երջանկության գրավականը առողջ մտածելակերպով հասարակություն և ամուր պետականություն ունենալն է, որի համար անհրաժեշտ է բոլորիս ջանքերի մեկտեղումը:

Երեխաների նկատմամբ մեր ցուցաբերած վերաբերմունքով է պայմանավորված հասարակության վաղվա օրը կերտողների արժեհամակարգի ձևավորումը, նրանց ապագա կյանքն ու նվիրվածությունը թե՛ ընտանիքին, թե՛ հայրենիքին:

Բոլոր ընտանիքներին մաղթում եմ սեր ու բարեկեցություն, որը հիմքն է երեխաներին ընտանեկան ջերմությամբ պարուրելու, առողջ սերունդ դաստիարակելու և ընտանիքի ու հասարակության արժանի հերթափոխի ապահովելու պատասխանատու գործի համար:

Մարզային իշխանությունների մշտական ուշադրության կենտրոնում եղել և մնում են երեխաների առողջության պահպանման, սոցիալական ապահովվածության, կրթության ու դաստիարակության, որպես բազմակողմանի զարգացած մարդ կայանալու խնդիրները: Հարգելի ծնողներ, հունիսի 1-ը ոչ միայն երեխաների, այլև ընտանեկան տոնն է, քանզի յուրաքանչյուր ընտանիք երջանիկ և ամուր է իր երեխաներով: Եվ երեխաների հետ կապված ապագայի մեր տեսլականը պայմանավորված է ընտանիքում աճող սերնդով, այդ սերնդի մոտ ձևավորված արժեհամակարգով՝ ընտանեկան, ազգային և համամարդկային: Համոզված եմ, որ յուրաքանչյուրս ձգտում է առավելագույնս կատարելության հասցնել մեր երեխաների անձնային ու մտավոր որակները՝ որպես մեզ լավագույն փոխարինողների: Ի վերջո, երեխաներն են ընտանիքի սիրտ ու հարգանքի, հավատարմության ու հանդուրժողականության ամենագուլալ ակունքները: Առանց երեխաների կյանքն անիմաստ է դառնում, որովհետև հենց նրանց հետ են կապված մարդկանց ամենագնիվ նպատակներն ու լավագույն ցանկությունները, քանզի յուրաքանչյուր երեխայով է պայմանավորված մեր ընտանիքների ու մեր երկրի վաղվա օրը:

Մի րեկի երեխաներ, իմ փոքրիկ բարեկամներ, կրկին շնորհավորում եմ ձեզ այս պայծառ ու լուսավոր տոնի կապակցությամբ և մաղթում եմ անամպ երկինք, անհոգ ու գունեղ մանկություն: